Ն՚ա զարդարուն. կապել է լայն գօտի, ուսերին ձգել է թիկնոց, թեւերը վեր բարձրացած տօթոզի դիրքով: Ունի բեխեր եւ մօրուք. դլխարկը ձակատի մասում զարդարուն, ասել է, իշխանական. գլխարկի մասերը առանձերը հասնող կապայ եւ վերան ձգել նոյնպիսի ծալքաւոր փոամիլ, որի վերին քղանցքները իջնում են կրծքի վերայ. քղամիլի վեչերը հորիզոնական ուղղութեամբ պատել է վզքի եւ ձեռքերի առաջամասը.



Պատկ. 92

կանջևերի կողմից մազերի վրայով վար կախուած:

Բուն կոթողի երեսին Փրկիչն է կանգնած, բոլորակ լուսոյ պսակով, մազերը երկար եւ երկու կողմից ականջների վերայով կաւիճներով ուսերի վերայ իջած: Հագել է երկար, ուղղահայեաց ծալքերով, մինչեւ ձախ ձեռքին բռնել է աւետարան, իսկ աջով օրհնում է: Ահա ձեզ Յիսուսի պատկերապրութեան արեւելեան ձեւակերպութեան առաջին օրինակներից մէկը, ասորա-միջագետական դրօշմով:

Յիսուսի ոտքերի տակ կայ մի ուրիշ քանդակ, տարաբաղդաբար, չատ եղծուած վի-